

Հոս համառօտ կերպով՝ թէ որո՞նք են յատկանիշերը ճշմարիտ քրիստոնէական կամքի մը՝ որ խաղաղութեան կը ցանկայ:

խաղաղութեան տենչացող քրիստոնէական ճշմարիտ կամքը Աստուծակոչ գալ, ինքն է Աստուած խաղաղութեան (Հռոմ ժե. 38), ինքը՝ որ ստեղծեց աշխարհը որպէս զի խաղաղութեան կայան մը ըլլայ, ինքը՝ որ տուաւ խաղաղութեան պատուէրը՝ այն խաղաղութեան որուն մասին սուրբ Օգոստինոս կը խօսի կոչելով զայն « Անդորրութիւն կարգաւորութեան մէջ »:

Խաղաղութեան քրիստոնէական կամքն ալ ունի իր զէնքերը, որոնց գլխաւորներն են աղօթքը և սէրը. յարատեւ աղօթք առ Հայրն երկնաւոր՝ որ ամէնուս Հայրն է. եղբայրական սէր բոլոր մարդերու և ժողովուրդներու մէջ, բոլորն ալ իբրեւ որդիներ Նոյն Հօր՝ որ երկինքն է. սէր՝ որ համբերատարութեամբ կը յաջողի միշտ տրամադիր և պատրաստ ըլլալ զիրար հասկնալու և համաձայնելու ամէնուն հետ:

Այս կրկնակ զէնքերը Սատուծմէ կու դան, և հոն՝ ուր անոնք կը բա-
ցակային, հոն՝ ուր՝ միայն նիւթական զէնքեր շարժել գիտեն՝ խաղաղութեան
ճշմարիտ կամք մը չի կրնար գոյութիւն ունենալ, վասն զի այդ լոկ նիւ-
թական սպառազինութիւնները անխուսափելիօրէն կը ներշնչեն անվստահու-
թիւն և կը ստեղծեն պատերազմի մթնոլորտ։ Ուստի ո՞վ չի նշմարեր թէ
որքան կարեւոր է ժողովուրդներու համար պահպանել և զօրացնել քրիս-
տոնէական կեանքի պայմանները և թէ որքան ծանր է իրենց պատասխա-
նատուութիւնը բնարութեան և հսկողութեան մէջ այն անձերու՝ որոնց
յանձնուած է անմիջական պատրաստութիւնը սպառազինութիւններու։

խաղաղութեան տենչացող քրիստոնէական ճշմարիտ կամքը դիտարկաւ նախկին է, վասն զի յարգող խաղաղութեան աստուածային պատուիրանին՝ ազգային արժանապատուութեան կամ պատուոյ հարց մը չի դարձնել երբեք պատերազմի շարժառիթ կամ մանաւանդ պատերազմի սպառնալիք։ Կը զգուշանայ ղէնքի զօրութեամբ հետապնդելէ իրաւունքի պահանջը՝ որ թէպէտ օրինաւոր՝ բայց չի հակակշռել հրդեհ մը բորբոքելու վտանգը իր բոլոր ահուկի հետեւանքներովը հողեկան և նիւթական։

Հոս երեւան կու գայ ժողովուրդներու պատասխանատուութեան խնդիրը երիտասարդ հասակին գատախարակութեան գործին մէջ, հանրային կարծիք ստեղծելուն մէջ, զոր արդիական մեթոտները և միջոցները այնքան դիւրաւ գրգռու և փոփոխական դարձուցած են ազգային կեանքի ամէն մարզերու մէջ: Այս աշխատանքը, սակայն, պէտք է անդուլ թափուի զօրացնելու համար համերաշխութիւնը բոլոր կառավարութիւններու միջեւ ի պահպանութիւն խաղաղութեան: Մէն մի բռնաբարող իրաւունքի՝ որպէս խաղաղութեան վրդովիչ՝ պէտք է անպատիւ միայնութեան մը գատապարտուի քաղաքակիրթ ընկերութեան կողմէն:

Խաղաղութեան քրիստոնէական կամքը գործնական է և իրապաշտ: Ի՞նչ անմիջական վախճանն է վարատել կամ գէթ մեղմել դժտութիւններու պատճառները, որոնք կը ծանրացնեն բարոյապէս ու նիւթապէս պատերազմի վտանգը: Այս պատճառներն են, ի միջի այլոց, գլխաւորապէս տոհմային երկրին համեմատական անձկութիւնը և նախանիւթի չքաւորութիւնը: Ուստի վտխառնակ մեծագին ծախքերով սննդեղէններ զրկելու՝ ո՞րէ՛ տեղ ի՞նչ հարե-

Լանցի հաւարուած տարագիր ժողովուրդներու, ինչո՞ւ չդիւրացնել ընտա-
նիքներու գաղթը և ներգաղթը, զրկելով զանոնք այնպիսի աշխարհներ՝ ուր
դիւրաւ կարենան գտնել իրենց պէտք եղած ապրուստը: Եւ փոխանակ չա-
փառութիւն արտադրութիւնը, յաճախ առանց արդար պատճառի, ինչո՞ւ
զլանալ ժողովուրդին արտադրելու կարելիութիւնը իրեն բնական կարողու-
թեան համեմատ, շահելու համար իր ամէնօրեայ հացը՝ իբրեւ իր աշխա-
տանքին պտուղը, քան թէ իբրեւ նուէր սը ստանալ զայն: Հոսկ, փոխանակ
պատնէշներ բարձրացնելու, փոխադարձաբար արգելելու համար նախանիւ-
թեքու ստացումը, ինչո՞ւ ազատ չընել բոլոր անկարեւոր կապանքներէն ա-
նոնց գործածութիւնը և փոխանակութիւնը, այն կապանքներէն զլիաւու-
րապէս՝ որոնք վտանգաւոր անհաւասարութիւն մը կը ստեղծեն տնտեսական
դեանի վրայ:

գեանի վրայ։

Խաղաղութեան քրիստոնէական կամքը ոյժ է, ո՛չ տկարութիւն կամ յոգնած համակերպութիւն. ան բոլորովին մէկ բան է յաւիտենական և ամենազօր Աստուծոյ խաղաղութեան կամքին հետ։ Յարձակողական ոճէ պատերազմ այն բարիքներուն դէմ, զոր աստուածային խաղաղութեան պատուի-րանը կը պարտադրէ յարգել անպայման և ապահովել, - որով նաեւ հովա-նաւորել և պաշտպանել, - մեղք է և ոճիր, քրէական յանցանք է աշխարհը ստեղծող և կարգաւորող Աստուծոյ մեծ վայելութեան դէմ։ Սպառնալիքի տակ ապրող կամ արդէն իսկ անարդար յարձակումի մը զոհ եղած ժողովուրդ մը՝ եթէ քրիստոնէաբար ուզէ խորհիլ ու գործել, չի կրնար կրա-ւորական անտարբերութեան մէջ մնալ, դեռ աւելի՝ ժողովուրդներու ընտա-նիքին համաձայնութիւնը կ'արգիլէ միւսներուն մնալ իբր պարզ հանդի-սատեաններ, անկիր չէզոքութեան դիրքին մէջ։ Ո՞վ պիտի կարենայ երբեք կշռել անցեալի մէջ նախայարձակ պատերազմի հանդէպ նման անտարբե-րութեան մը պատճառած վնասները, անտարբերութեան մը որ շատ հեռու է քրիստոնէական ըմբռնումէն։ Եւ ինչքան դառն կերպով զգացուց արդէն ապահովութեան պակասը այդ անտարբերութիւնը՝ « Մեծերուն » և մաս-նաւորապէս « Փղբերուն » համար։ Իսկ փոխարէն ինչ օգուտ, ոչինչ, սըր-տապնդել և քաջալերել յարձակողականի հեղինակները և կուսակիցները, առանձին մնացած ժողովուրդները գնելով յայնչափա զինուելու անհրաժեշտ ստիպման տակ։

ստիպման տակ՝
Սասունոյ և Իրմէն հաստատուած կարգին վրայ յեցած՝ խաղաղութեան քրիստոնէական կամքը, հետեւաբար, պողպատի նման զօրեղ է։ Բոլորովին տարբեր գրոշմ՝ մ'ունի ան քան ինչ որ է պարզ մարդասիրական զգացուսը՝ որ յաճախ միայն դիւրողգայութենէ մը առաջ եկած՝ կը խորշի պատերազմէ, անոր պատճառած արհաւիրքներուն, անդ թու թիւններուն, աւերումներուն և հետեւանքներուն համար միայն, ոչ թէ նաեւ անոր անարդար ըլլալուն։ Լոկ շահագիտական բնոյթ կրող այդ զգացումին, որ միանգամայն նիւթապաշտ է իր ծագումին մէջ, կը պակսի խիստ և անպայման պարտաւորութեան հաս- տատուն հիմը։ Այն կը ստեղծէ այն հողը՝ ուր կը ստուերադրուին ամուլ իրաւախօհութեան մը նենգութիւնները, ուրիշի վնասով ինքզինքը փրկելու փորձեր և ամէն երեւոյթի տակ՝ միշտ նախադարձակին բախտը։ Ու ասիկա այնքան ճշմարիտ է՝ որ ոչ տառապանքներու և պատերազմներէ պատճառուած



չարիքներու լոկ նկատողութիւնը, և ոչ արարքին ու անոր բերելիք շահին խղճամիտ կշիռը կը զօրեն վերջապէս ճշտել՝ թէ արդեօք բարոյապէս օրինաւոր է, կամ ինչ ինչ իրական պարագաներուն մէջ նաեւ պարտաւորիչ (բաւական է որ միշտ յաջողութեան հիմնուած հաւանականութիւն մը ըլլայ) ուժի զօրութեամբ ետ մղելը նախադրեալ թշնամին:

Բան մը սակայն ստոյգ է, խաղաղութեան պատուիրանին աստուածային ըլլալը: Անոր վախճանը մարդկութեան աստղաշարներուն պաշտպանութիւնն է, իբրեւ Ստեղծողին աստղաշարները: Արդ, այս աստղաշարներէն ոմանք՝ այնքան հարկաւոր են մարդկային բնականացութեան որ անարդար յարձակումի դէմ անոնց պաշտպանութիւնը անտարակոյս օրինաւոր է բոլորովին. այս պաշտպանութիւնն ընելու պարտաւոր է նաեւ ազգերու համաձայնութիւնը, որ պարտք ունի առանձին չձգելու յարձակումի ենթարկուած ժողովուրդը: Այդպիսի պարտքի մը անխուսափելի գործադրութիւնը պիտի ծառայէ յարձակողը վհատեցնելու, և հետեւեալ խափանելու պատերազմը կամ գէթ՝ չարագոյն պարագային, տառապանքները կարճատեւ ընելու:

Այս կերպով կը սրբագրուի « եթէ խաղաղութիւն կ'ուզես՝ պատերազմի պատրաստուէ » առածը, ինչպէս նաեւ « խաղաղութիւն աւելն գնով » բանաձեւը: Կարեւորը՝ խաղաղութեան անկեղծ և քրիստոնէական կամքն է, զոր ունենալու զմեզ կը ստիպեն վերջին պատերազմի աղէտներուն տեսքը, ընդարձակ գերեզմանատուններէն լուռ բարձրացող նշովքները, ուր անվերջ կարգերով շարուած են իր զոհերուն շիրիմները, գերիներու և տարագիրներու տակաւին չգոհացուած աղէկէզ կարօտը, շատ մը քաղաքական ձեռքակալուածներու տագնապը և լքումը՝ յոգնած անարդար հալածանքէն: Բայց՝ դեռ աւելի պէտք է խորախուսէ զմեզ խաղաղութեան աստուածային պատուիրանին ազգու ձայնը, աստուածային Մանուկին քաղցրօրէն խորաթափանց նայուածքը:

Լսեցէք, Հեթանոսներու Առաքեալին սքանչելի խօսքերը, ծննդեան գիշերին զօղանջող զանգակներու նման. նախապէս ինքն ալ ստրուկ ցեղային և ազգային ամբարտաւանութեան խեղճուկ նախապաշարունակներու, որոնք իրեն հետ խորտակուեցան Դամասկոսի ճամբուն վրայ. « Եա (Յիսուս Քրիստոս) է խաղաղութիւն մեր, որ արար գերկոսեան մի... սպան զթշնամութիւն յանձին իւրում, և եկն աւետարանեաց խաղաղութիւն ձեզ հեռաւորաց, և խաղաղութիւն մերձաւորաց » (Եփես. Բ. 14-17):

Եա է մեր խաղաղութիւնը, որ երկու ժողովուրդները միացուց... իր անձին մէջ սպաններով թշնամութիւնը, և եկաւ խաղաղութիւն աւետելու ձեզի՝ որ հեռաւորներ էիք, և խաղաղութիւն անոնց՝ որ մերձաւորներ էին:

Ուստի Մենք այս պահուս, Մեր ձայնին բոլոր զօրութեամբ կ'երգուին ցընենք ձեզ, սիրելի որդեակներ բոլոր աշխարհի, աշխատեցէք խաղաղութեան համար Փրկչին սրտին համաձայն: Բոլոր ուղղամիտ հոգիներու հետ, որոնք ձեր շարքերուն մէջ չըլլալով հանդերձ՝ միացած ու հաղորդ են ձեզի այս զաղափարականին ձկառումին մէջ՝ գործակցեցէք խաղաղութեան քրիստոնէական կամքը ծառայելու և յաղթանակել տալու:

Օստերլանթորէ ուսմանոյ,
թ. 300. - 25 Դեկտմ. 1948

Թրգմ. Հ. Ս. Ա.

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ա.Զ.Գ.Ա.Պ.Ա.Հ.Պ.Ն.ՈՒՄԻ ՀԱՐ՝

ԴՊՐՈՑ ԵՒ ՄԱՄՈՒԼ

(ԱՄԱՆՈՐԻ ԹԵԼԱԳՐՈՒԹԻՒՆԵՐ)

Վարագոյրը կրկին իջաւ փակելու՝ անցնող տարին եւս յաւիտեականութեան գիրկը: Տարիներն այսպէս կը թաւալին տանելով իրենց հետ հեւքը վիրաւոր մարդկութեան՝ դէպի անծայրածիր հորիզոնները անցեալ պատմութեան, ուր ամէն ինչ կ'երթայ վերջանալ: Հակառակ այս ցաւատանջ իրականութեան՝ մենք կը մտնենք կրկին նոր տարիի մը սեմէն ներս՝ երջանիկ ապագայի մը յոյսերով օրօրուն:

Մարդկային սեռի հսկայ զանգուածին մէջ՝ մեր ազգը որ փոքրիկ հատ մ'է մանանոյսի, բաժնուած զանազան հողամասերու վրայ, բաժնուած զանազան խտրութիւններով կրօնական, քաղաքական ու ընկերային՝ կը տառապի իր կարգին իր սեփական ցաւերով, որոնց ուշադրութիւն դարձնելու ենք ամէնգնիս միանակատ, գիտակից՝ թէ ամէն ժամանակներէ աւելի այսօր պէտք ունինք միութեան՝ դարմանելու համար տառապանքի փամբուն վրայ բացուած մեր վերքերը:

Կեանքի, կեանքականութեան ապացոյց փնտռել աւելորդ է. կը բաւէ ակնարկ մը նետել մեր Սփիւռքի հայ գաղթավայրերուն՝ համոզուելու համար թէ ի՞նչքան եռանդ ու կորով կայ տակաւին հին ազնուական ազգի մը սա վայրավատին բեկորներուն մէջ, որ կը ջանան մղել նգնաժամային պայքար՝ բնաջնջումի, ճուլումի ահաւոր սպառնալիքներուն դէմ: Կը ջանանք այո՛, մղել այդ պայքարը, յաճախ առանց շօշափելի արդիւնքներու, բայց կը մղենք. անհրաժեշտը այդ է: Եթէ մղուած պայքարին համապատասխան արդիւնք անգոհացուցիչ է, պատմաւորները զանազան են. կամ հիւրընկալող երկրին ուժեղ եւ գերազանցօրէն բարձր քաղաքակրթութիւնն է, որմէ կը նուաճուի մերինը, եւ կամ դարուս տիեզերական հիւանդութիւնը, որ մեղկացուցիչ շպար մը ձգած առհասարակ սրտերու եւ հոգիներու կեանքին մէջ, կը հեռացնէ լրջութեան հորիզոններէն. կամ թէ մեր անկազմակերպութիւնն է, գլխաւոր եւ թերեւս միակ պատճառը՝ անորոշ ու տարտամ մեր քայլերուն: Դրամագլուխ, նպաստ մեծահարուստ-